

Կրտի վանքին ծագումը բացատրող երկու աղբիւրներ ունինք:

Ա.— Կլարեղ Սկիւրուպոյեցիին Եւթիմիոսի և Մար—Սաբայի կենսագրութիւնը, որուն մէջ յիշեալը հետեւեալ կերպով կը գրէ Կրտի վանքին ծագման պատմութիւնը: Երուսաղէմի Մարտիրոս պատրիարքին ընկերն ու յաջորդն էր Եղիա՝ որ առանձնացաւ Յորդանանի դաշտը, Երիքովի առջև: Ան շինեց հոն խցիկներ՝ ուր իսկոյն հաւաքուեցան աշակերտներ: Վերջնոցս համար Եղիա շինեց կրկին վանքեր՝ վանահօր մը հսկողութեան տակ: Եղիա՝ իր կենդանութեան՝ երբեք չներեց որ իր հաստատած կրկնակ վանքը բաժնուի: Ան իր մահուան ժամանակ նոյն իսկ կտակեց որ չբաժնեն զայն. բայց չյարգուեցաւ անոր կտակը: Եղիայի վանքերուն աւերակները կը ճանչցուին Բուճն կը Էսկրաֆիր անունով որ կը գտնուին Երիքովի հարաւային արեւելքը: Նոյն աւերակները կը պարունակեն ձօխ շինուածանիւթեր՝ որ գործածուած են Երիքովի արդի շինութեանց, ու անոնց ամենէն գեղեցիկ քարերը մտած են Երիքովի ռուսական նորակերտ հիւրանոցին մէջ:

Կարելի չէ հաւատալ թէ Եւթիմիոսի աշակերտը՝ Եղիա պատրիարք՝ նախանձախնդիր կրօնական աղքատութեան՝ այնքան ճոխութիւններ տուած ըլլայ իւրակերտ վանքին. հաւանական է որ կրկնակ վանքերու վանահայրերէն առաւելագէտ իր կամքը չյարգող վանահայրն եղած պիտի ըլլայ վանքը նորանոր ձօխութիւններով օժտողը: Այժմ զանք Մար—Սաբայի կենսագիր Սկիւթուպոյեցի պատմագրին խօսքերուն. «Յուլիանիա պատրիկին մահուանէն յետոյ իր ներքինիները Երուսաղէմ եկան: Եւ որովհետեւ անոնք Պոլսի մէջ տեսակցած էին Մար—Սաբայի հետ, զընացին գտան զինքը իր վանքին մէջ: Անոնք շատ զրամ ունէին, աղաչեցին Սաբայի ընդունիլ զիրենք իր վանքին մէջ: Ծերունին մերժեց ընդունիլ զանոնք ինչ ինչ զգուշութիւններու համար, բայց որովհետեւ ծանօթ էր անոնց՝ քաղցր խօսքերով զըրկեց զանոնք առ որ անկ է: Ներքինիները ըստ բաւականին ծանօթ ըլլալով վանական կեանքի՝ դիմեցին Երուսաղէմի պատրիարք Պետրոս արքեպիսկոպոսին (524—544) խնդրելով անորմէ որպէս զի իրենց յարմար տեղ մը փութայ յատկացնել: Արքեպիսկոպոսը յանձնարարեց Երիքովի մօտ գտնուած Եղիայի վանքերուն վանահօր Աղեքսանդր անուն մէկու մը՝ յաջորդն Նէսպապոսի և Զաքարիայի՝ որպէս զի մէկ քանի օրուան համար այս ներքի-